

---

---

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒՀԻ  
ՄԱՐԻԱՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

ՍՈՒՄԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*XX դարասկզբին, դրանից առաջ և հետո, թերևս, ոչ մի հայ գրող չի ունեցել այդքան մեկենասներ, հովանավորներ ու աջակիցներ, որքան Թումանյանը: Եվ այստեղ ամենաէականն ու կարևորը ոչ թե նրանց մեծաթիվ, առավել ևս մեծահարուստ լինելն էր, այլ այն, որ նրանք բոլորը խորությամբ գիտակցում էին Թումանյանին աջակցելու կարևորությունը, նրա ստեղծագործության բացառիկ դերն ու նշանակությունը հայ գրականության համար:*

*Թումանյանի մեկենաս-հովանավորների, անդամական բարեկամների ցանկում պայծառ մի անուն է իշխանուհի Մարիամ Թումանյանը՝ Արցախի մելիքներից սերող, իրավաբան և հասարակական գործիչ Մարկոս Դոլուխանյանի դուստրը: Հայ մշակույթի բազմադարյան պատմությունը չի կարող մատնանշել մտավորական, արվեստասեր մի կնոջ և գրողի, նվիրյալ մեկենասի ու արվեստագետի այնպիսի սերտ, անկեղծ և ջերմ հարաբերություններ, ինչպիսին եղել են իշխանուհու և բանաստեղծի միջև: Ավելին, դրանք մարդկային հարաբերությունների մեջ նույնպես հազվագյուտ են՝ որպես տղամարդու և կնոջ միջև մաքուր, բանաստեղծական, անբասիր բարեկամություն: Հովհաննես Թումանյանը և իշխանուհին ճանաչում էին միմյանց դեռևս 1892 թվականից, երբ 23-ամյա բանաստեղծը ծառայում էր Հրատարակչական ընկերության գրասենյակում՝ զբաղեցնելով գրասենյակապետի պաշտոնը, իսկ 22-ամյա իշխանուհին նոր ընտրվել էր այդ ընկերության վարչության անդամ: Ծանոթության առաջին իսկ օրից Թումանյանը, քիչ է ասել, թե գրավում է իշխանուհու ուշադրությունը՝ նա պարզապես հմայում է իր ապագա «քնքուշ» բարեկամուհուն՝ «համակրելի դեմքով» և «քաղցր ժպիտով»<sup>1</sup>:*

*Գեորգի Թումանովի՝ «Նովոյե օբոզրենիե» թերթի խմբագրի և նրա երիտասարդ կնոջ՝ իշխանուհի Մարիամ Թումանյանի տունը բանաստեղծի համար դառնում է այցելության ամենասիրելի վայրերից մեկը, և ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ էր ապրում իր պոեզիայով և իրենով հմայված, հրապուրված ժամանակի հայ գրասեր, բարեգործ, հազվագյուտ հայուհիներից մեկը, այլ և այն պատճառով, որ տաղանդի գորացման համար միջավայրը, ուր լինում են հանդիպումներ ժամանակի ականավոր, ինքնատիպ մարդկանց՝ տարբեր ազգերի*

---

<sup>1</sup> Մ ա ր ի ա մ Թ ու մ ա ն յ ա ն. Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 95 (այսուհետև՝ ՄԹ. էջերը կնշվեն մեջբերումներին կից):

գրողների, հասարակական գործիչների, գիտնականների, դերասանների հետ, անհրաժեշտություն է<sup>2</sup>:

Մ. Թումանյանի խոսքերով՝ Թումանյանը դառնում է «մեր ընտանիքի մշտական անդամը», որտեղ նա «հոգով հանգստանում էր»<sup>3</sup>: 1897 թ. վերջերին, իշխանուհին իր տանը հինգշաբթի օրերին կազմակերպում է գրական երեկոներ, որոնք ստացել էին «Հինգշաբթիներ» (երբեմն նաև «Չորեքշաբթիներ») անվանումը: Կազմավորված գրական այդ խմբակի մշտական անդամները [«անբաժան հոգի էինք» (ՄԹ, 107)] հինգն էին՝ Մարիամ Թումանյանը, Հովհաննես Թումանյանը, Լևոն Շանթը, Փիլիպոս (Ֆիլիպ) Վարդապարյանը, բժիշկ Արիստակես Զարգարյանը: Սկզբնական շրջանում, մինչև Բաքու տեղափոխվելը, երեկոներին մասնակցում էր նաև Հովհաննես Քաջազունին: Հինգշաբթի երեկոյթները տևել են մինչև 1902–1903 թթ.<sup>4</sup>: «Հինգշաբթիներում» քննվել է նաև Թումանյանի տնտեսական և առողջական ծանր վիճակը:

Հետագայում Թումանյանը դառնությամբ հիշում էր. «Տանը չէին ուզում, որ բանաստեղծություններ գրեմ, խանգարում էին և ստիպում, որ տերտեր դառնամ»<sup>5</sup>: Եվ հուսահատության տխուր մի պահի բանաստեղծը զգալով իրեն մի մարդ, որ «ոչ վանքից բաժին ունի, ոչ կյանքից»<sup>6</sup>, տխուր որոշում է կայացնում՝ քահանա դառնալ: Հենց այն օրը, երբ բանաստեղծը կարիքից դրդված խոսում է առաջնորդի հետ և խոստանում վերջնական պատասխանը տալ հաջորդ օրը, գալիս է իր՝ քահանա դառնալու որոշման լուրը հայտնելու իշխանուհի Մ. Թումանյանին:

Մ. Թումանյանի զգացմունքները բանաստեղծի հանդեպ չի կարելի համարել բարեբարի, մեկենասի մշակութային շահերից բխող վերաբերմունք գործչի նկատմամբ՝ պայմանավորված միայն նրա տաղանդի կամ հանճարի գիտակցությամբ: Նա Թումանյանի համար անհանգստանում էր այնպես, ինչպես կարելի է ցավել միայն աշխարհում ամենահարազատի համար: Մի ամբողջ գիշեր մտայլ, մղձավանջային մտածմունքների տպավորության տակ երևակայում է, թե Թումանյանն իր կամքին հակառակ քահանա դառնալու հուսահատ որոշում կայացնելու պատճառով ինքնասպանություն կգործի: Նա վաղ առավոտյան շտապում է իր դպրոցական ուսուցիչ Ալեքսանդր Քիշմիշյանի տուն, որպեսզի

<sup>2</sup> Մարիամ Թումանյանի թոռնուհին՝ Նատալյան իր ինքնակենսագրական վիպակում հիշատակում է Գորդլենկոյի, Վ. Մելերխոլդի, դերասանուհի Յավորսկայայի, ողբերգակ, պետերբուրգյան օպերայի հայտնի երգիչ Կոմիսարժևսկու անունները: Նա վկայում է, որ վերջիններս հաճախ էին խմբագրություն գալիս: Մարիամ Թումանյանն էլ իր հերթին նշում է, որ հիշյալ անվանի արվեստագետները խմբագրական գործերով «մեր տանը լինում էին», ուստի չի բացառվում, որ Թումանյանը հանդիպել է նրանց հետ (տե՛ս Н. Т у м а н о в а. Давно в Цагверн, с. 55–56, ՄԹ, 97):

<sup>3</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969, էջ 468 (այսուհետև՝ ԹԺՀ. էջը կնշվի մեջբերմանը կից):

<sup>4</sup> Հետագա տարիների «Հինգշաբթիներ» մասին որևէ տեղեկություններ չեն պահպանվել:

<sup>5</sup> Ն. Թ ու մ ա ն յ ա ն. Հուշեր և գրույցներ, Երևան, 1987, էջ 176:

<sup>6</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 9, Երևան, 1997, էջ 245 (այսուհետև՝ հատորը և էջերը կնշվեն մեջբերումներին կից):

վերջինս միջոտորդի իր փեսային՝ «Մուրճի» խմբագիր Կոստանդին Կրասիլնիկյանին՝ Թումանյանին ընդգրկել ամսագրի աշխատակիցների շարքում: Իշխանուհին պատմում է. «Նրանք շատ վախեցան... վալերյանի կաթիլներ խմացրին, բայց ինչքան շատ էին հոգատարություն ցույց տալիս ինձ՝ այնքան շատ էի թափում արցունքներ... – Դուք հասկանու՞մ եք – ասում էի ես, – Թումանյանը ճարը կտրած քահանա է ձեռնադրվում... մի թե՛ խայտառակություն չէ դա մեզ համար, որ այդպիսի մի տաղանդավոր բանաստեղծին մենք չենք կարողանում ապահովել... Տեսեք, թե Եվրոպայում ինչպես մեծարում են գրողներին, ինչպես ճոխ են նրանք ապրում այնտեղ, իսկ մեզանում Թումանյանի պես տաղանդավորները պիտի կորչեն աղքատության ճիրաններում» (ՄԹ, 121-122):

Այսպես, Մ. Թումանյանի սրտի միջով էր անցնում այն ամենը, ինչ կատարվում էր Թումանյանի հետ. «Ձեր ամեն մի վիշտը արձագանք է գտնում սրտիս մեջ», – խոստովանել է նա Թումանյանին<sup>7</sup>:

Իշխանուհին, Փ. Վարդագարյանը, Ար. Զարգարյանը միացյալ ուժերով ամեն ինչ անում են բանաստեղծին այդ հուսահատական որոշումից ետ պահելու համար. նրանց հաջողվում է բանաստեղծին դուրս բերել այդ անելանելի թվացող կացությունից, ազատել բոլոր մեծ ու փոքր պարտքերից, այնպես որ քահանա դառնալու հարկադրված որոշումը կորցնում է իր հրատապությունը: Մ. Թումանյանը Թումանյանին առաջարկում է ստանձնել տնային ուսուցչի պաշտոնը իր երեք անդրանիկ երեխաների համար:

1901–1902 թթ. բանաստեղծի առողջական վիճակը գնալով վատանում է: Դեռ երիտասարդ տարիներից Թումանյանը հաճախ էր հիվանդանում, ջերմում էր, նրա թոքերը լավ վիճակում չէին: Մինչդեռ նա նյութական ծանր կացության մեջ էր և չէր էլ կարող երազել իր միջոցներով բուժվելու մասին: Գրողը բազմաթիվ պարտքեր ուներ թե՛ խանութներին, թե՛ անհատներին՝ ապառիկ ապրանք վերցնելու համար, նա չէր վճարել յոթ ամսվա տան վարձը: Եվ ահա Փ. Վարդագարյանը և իշխանուհի Մ. Թումանյանը ստանձնում են այդ բոլոր պարտքերը մարելու, բազմաթիվ այլ ծախսերը հոգալու, ինչպես նաև բանաստեղծին Աբասթումանում, իսկ նրա ընտանիքին՝ Թիֆլիսում պահելու հոգսը: Սակայն միանվագ օժանդակությունը բավարար չէր, այն պետք է շարունակական լիներ, և նրանք անվերջ նորանոր միջոցներ էին փնտրում: Մ. Թումանյանը ներկայացում է ձեռնարկում սիրող դերասանների մասնակցությամբ, և արդյունքը՝ 600 ռուբլի, նույնպես հատկացնում է Թումանյանին (ՄԹ, 111)<sup>8</sup>:

1902 թ. Աբասթումանի աշունը դարձավ Թումանյանի երկերի 1903 թ. ժողովածուի նախապատրաստական շրջանը: Հեղինակի և նրա ժողովածուն հրատարակողների, հովանավորների ու կազմակերպիչների միջև հաճախ էին ծագում տարաձայնություններ: Դրանցից մեկը ծավալվել է գրքի բաժանորդագրության հարցի շուրջ: Բաժանորդագրությունը կազմակերպելու նպատակով իշ-

<sup>7</sup> Հովհաննես Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 5, Երևան, 1998, էջ 290:

<sup>8</sup> Է. Այլերոնի «Տաղտկալի աշխարհք» ֆրանսիական կատակերգության այդ բեմադրության մասին մանրամասն տե՛ս ՄԹ, էջ 115:

խանութի նյութական օժանդակություն է խնդրում, ի թիվս այլոց, նաև Սմբատ Շահագիզից ու մերժվում<sup>9</sup>: Վերջինս առաջարկում է աջակցություն խնդրել վաճառականներից, մասնավորապես Մինաս Բոգդանի Լազարյանից<sup>10</sup>: 1902 թ. դեկտեմբերի 5-ին իշխանուհին դիմում է Պետերբուրգի հայոց Եկեղեցական խորհրդին, որը ևս մերժում է նրա խնդրանք-միջնորդագիրը<sup>11</sup>: 1903 թ. փետրվարի 3-ին Մ. Թումանյանը դիմում է Կարապետ Եզյանին՝ կարծելով, թե նա է խորհրդի նախագահը<sup>12</sup>: Վերջինս արդարանում է. «Խորհրդարանը մերժել է ձեր առաջարկությունը, թե ինչ պատճառներով, այդ ինձ հայտնի չէ»<sup>13</sup>: Մ. Թումանյանին հաջողվում է այդ դիմումի մասին լուրը թաքցնել: Սակայն դիմում-շրջաբերականը, որը կազմել էին բանաստեղծի հովանավորները նրա ժողովածուի հրատարակության ծախսերը հոգալու համար, մեծ հուզումներ է պատճառում բանաստեղծին: Այդ դիմումի մեջ բանաստեղծի հովանավոր-ընկերները նկարագրել էին «համակրելի գրագետի»՝ Թումանյանի տնտեսական ու առողջական ծանր վիճակը, և ապա բացատրել, որ միայն նրա ժողովածուն հրատարակելու միջոցով հնարավոր կլինի, որ նա «կարողանա արտադրել ու աշխատել իր կյանքի այս ամենահասուն տարիների մեջ... քան սպասելու, որ նրա ծերության ու այլևս արտադրելու ապարդյուն օրերի մեջ միայն հասարակությունը գա իր համակրանքն ու օգնությունը մատուցանելու»<sup>14</sup>:

Լևոն Շանթը 1902 թ. հոկտեմբերի 16–18-ի նամակով դիմումն ուղարկում է Աբասյուման՝ բանաստեղծին, որի առաջին արձագանքը միայն մեծ ցավն էր: Թումանյանի հպարտությունն ու արժանապատվությունը այնպես է ընդվզում, որ չի հանդուրժում ոչ մի բացատրություն՝ հանուն իր անձի և նույնիսկ գրականության համար անհաստեղծին արվող դիմում-խնդրագիրն արդարացնող ոչ մի պատճառաբանություն: Թումանյանը կտրուկ մերժում է իր կամ իր ընտանիքի անվան հիշատակությամբ որևէ մեկին դիմելը և այդ ճանապարհով նյութական աջակցություն գտնելը:

Իշխանուհուն ուղղված Թումանյանի դժգոհությունը շատ ավելի հուզում է Մ. Թումանյանին, մանավանդ որ նրանց հարաբերությունները միշտ էլ հիմնված են եղել «սրտի քնքշության և հոգու ազնվության» վրա (9, 350): Եվ ահա Թումանյանը 1902 թ. նոյեմբերի 1-ին նամակով դիմում է իշխանուհուն. «Ես միշտ համոզված եմ եղել, որ Դուք քույրորեն տանջվում եք իմ վիճակով: Միտելի Մարիա Մարկովնա, ավելի ծանր ու դժվար դեպք չի կարող լինել երբեք, քան երբ մարդու՝ իրեն ապրելու և իր ընտանիքը պահելու հոգսն ու խնդիրը դուրս է գալի իր ձեռքից ու դրվում հրապարակ» (9, 350): Իշխանուհին պատասխանում է, որ շատ լավ է հասկանում Թումանյանի զգացումները, ապրումները և մտածում է միայն

<sup>9</sup> Հովհաննես Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, Երևան, 1985, էջ 365:

<sup>10</sup> Եղիշե Չարենցի գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Մարիամ Թումանյանի ֆոնդ (այսուհետև՝ ՄԹՖ), թիվ 633:

<sup>11</sup> Տե՛ս Արամ Տեր-Գրիգորյանի նամակը Մարիամ Թումանյանին. ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 79:

<sup>12</sup> Իրականում խորհրդի նախագահը իշխան Աբամելիք Լազարյանն էր (տե՛ս ՄԹՖ, 116):

<sup>13</sup> ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 202:

<sup>14</sup> Հովհաննես Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 4, էջ 370:

ու միայն նրա հանգստության մասին: «Միրելիս, – դիմում է նա բանաստեղծին, – մի թե Դուք կասկածում եք, որ Ձեզ հետ միասին տանջվում է և իմ սիրտը: Ինձ մեծ կսկիծ է պատճառում, որ ես չեմ կարող ապահովել Ձեզ այնքան, որ ստիպված չլինեմ ամեն անգամ դիմումներ անելու, շոշափելով Ձեր զգայուն ինքնասիրությունը: Իմ փափագս է Ձեզ այնպես պաշտպանեմ, որ ոչ մի մարդ չդիպչի Ձեր զգայուն սրտին, որ Ձեր հոգին հանգիստ լինի»<sup>15</sup>: «Հավատու՛մ եք, – շարունակում է իշխանուհին, – որ այս տողերը գրելիս ես լալիս եմ, որ իմ բոլոր ճիգերը իզուր են... որ չեմ կարող պաշտպանել Ձեր սիրտը կոպիտ ձեռքերից: Ես կուզեմայի Ձեզ խնամել, ինչպես մի քնքուշ ծաղիկ, պահպանել թե՛ արեգակի այրող ճառագայթներից, թե՛ ձմեռվա ցրտից: Ձեր ամեն մի վիշտը արձագանք է գտնում սրտիս մեջ»<sup>16</sup> (ընդգծումը մերն է – Ս. Ն.): Թեև արցունքներն այլևս թույլ չէին տալիս շարունակել, սակայն իշխանուհին, այնուամենայնիվ, փորձում է խաղաղեցնել բանաստեղծի հոգու խռովքն ու փոթորիկը՝ վստահեցնելով նրան երկու բանում. «...որ նախ Դուք մենակ չեք տանջվում, որ Ձեզ հասկացողներ ու համակրողներ կան, և երկրորդ, որ ես ամեն միջոց գործ կդնեմ, որ Ձեզանից հեռու պահեմ մուննաթները և խայթոցները»<sup>17</sup>: Թումանյանի միջավայրը, նրա բարեկամներն ու ընկերները, ցանկանալով, թե առանց ցանկության, չէին հակառակվում բանաստեղծի կամքին:

1903 թ. սկզբին գրքի բաժանորդագրությունը դեռ շարունակվում էր: Հրատարակիչները խոստանում էին գիրքը հրատարակել ծավալուն, «մոտ 350 էջ, շքեղ թղթի վրա, հեղինակի պատկերով...» և բաժանորդագրվելու համար առաջարկում էին Թիֆլիսում դիմել Մ. Թումանյանին և Փ. Վարդագարյանին, Բաքվում՝ Մ. Տեր-Անդրեասյանին և Ա. Նազարեթյանին<sup>18</sup>:

Նույն թվականի սեպտեմբերի վերջին վերադառնալով Թիֆլիս՝ Թումանյանը ժողովածուի ձեռագիրը հանձնում է իշխանուհուն: Վերջինս գրքի մամուլները տպագրված, պատրաստ լինելուց հետո այն տանում է գրաքննիչի մոտ: Տպագրությունը հանձնվում է Մնացական Մարտիրոսյանի տպարանին, որի տնօրենը, իշխանուհու վկայությամբ, «հայտնի էր իբրև մաքուր և գեղարվեստորեն տպագրող» (ՄԹ, 122): Իշխանուհուն թվում էր, որ գրքի հրատարակության գործի հեղինակի միջամտությունը դրանով կավարտվի, սակայն, ինչպես ինքն է նշում, «...նոր տանջանքների դուռ բացվեց» (ՄԹ, 123):

Տպագրիչներին իշխանուհին մի հանձնարարական էր տալիս, իսկ հեղինակը՝ մի ուրիշ: Ի վերջո, գիրքը լույս է տեսնում 1200 օրինակ տպաքանակով: Շքեղ օրինակների գինը նշանակվում է 10 ռուբլի, սակայն գտնվում էին մարդիկ, որոնք հոժարակամ և մեծ ուրախությամբ վճարում էին 100 ռուբլի: Մովորական կազմ ունեցող գրքերի գինը նշանակվում է 3 ռուբլի: Ժամանակի մամուլում գրքի գինը հատուկ քննության առարկա է դառնում: Լեոն գրում է. «Գիրքը պետք է է-

<sup>15</sup> Նույն տեղում, հ. 5, էջ 289:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 290:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> «Տարագ» (Թիֆլիս), 1903, թիվ 18, մայիսի 16:

ժանացնել»<sup>19</sup>: Հենց Լեոյին՝ «Մշակի» մի աշխատակցին» նկատի ունենալով, «Տարազի» գրախոսը գրում է. «Ամոթ նրանց, որոնք չեն ամաչում, տրտնջում են և բարձրադասակ պահանջում են բանաստեղծից, որ նա և՛ երգե, և՛ ձրի տպագրել տա յուր երկերը»<sup>20</sup>: Գրախոսը, փորձելով ապացուցել թերթի կողմնակալ վերաբերմունքը, պարզաբանում է, թե ինչպես են այդ թերթի էջերում «կարճատես իմաստակներ» համարվում բոլոր նրանք, ովքեր խմբագրության համար նախընտրելի գրողների «գրական արտադրություններին նայում են բարձրից»<sup>21</sup>: Շնորհակալություն է հայտնում իշխանուհի Մ. Թումանյանին՝ հայ լավագույն բանաստեղծին աջակցելու համար<sup>22</sup>:

Գրքի 1200 օրինակից միայն 400-ն է վաճառում իշխանուհին: Ստացված 2163 ռուբլուց մի մասը նա հատկացնում է տպագրական ծախսերը ծածկելուն, մյուս մասը ամբողջությամբ տրամադրում է հեղինակին: Մ. Թումանյանը մտադիր էր գրախանութներին հանձնված մոտ 800 օրինակի գումարն էլ տրամադրել բանաստեղծին, սակայն, ինչպես հենց ինքը իշխանուհին է վկայում, «Մի շաբաթ հազիվ էր անցել, որ Թումանյանը մտել էր գրախանութները, վերցրել էր ժողովածվի օրինակներ ու ձրի բաժանել էր սրան-նրան» (ՄԹ, 125, ընդգծումը մերն է – Ս. Հ.): Նման պահվածքով ու վարվելակերպով բանաստեղծը միայն խանգարեց իր բարեկեցության խնդիրներով մտահոգված մտերիմներին գեթ որոշ ժամանակով նյութապես ապահովել իրեն: Սակայն նրանք մխիթարվեցին նրանով, որ գիրքը շատ լավ ընդունելություն գտավ: «Մի խոսքով, – գրում է Մարիամ Թումանյանը, – ամեն կողմից շնորհակալական նամակներ էի ստանում և բերանացի գովասանքներ էի լսում...: Պարզ բան է, որ ինձ շատ էին մխիթարում այդ գովասանքները, ու ես մոռացության էի տվել իմ անցած չարչարանքները» (ՄԹ, 124-125):

Իշխանուհի Մ. Թումանյանը նպաստել է Կոմիտասի ու Թումանյանի ծանոթությանը: 1904 թ. հունվարի սկզբին նա Էջմիածին Կոմիտասին է ուղարկում բանաստեղծի ժողովածուն և խնդրում է «Անուշը» օպերայի վերածել: Կոմիտասը իշխանուհուն պատասխանում է 1904 թ. հունվարի 22-ին գրեթե թևավոր խոսք դարձած մի արտահայտությամբ. «Շնորհափայլ իշխանուհի, ուրախությամբ կարդացի պ. Հ. Թումանյանի «Անուշը» ու շատ անուշ գտա. պատրաստ եմ Ձեր փափագն իրագործելու»<sup>23</sup>: Այդ նպատակով Կոմիտասը իշխանուհուն խնդրում է իր կողմից բանաստեղծին առաջարկել որոշ փոփոխություններ կատարել<sup>24</sup>: Կոմիտասը շտապեցնում էր հեղինակին, որպեսզի կարողանա պռեմի համար երաժշտության «ծրագիրը մշակել»: Նա իշխանուհուն արագ աշխատելու խոստում չի տալիս, քանի որ այդ պահին ծանրաբեռնված էր. Տիգրան Նազարյանի խնդրանքով «Տարազի» համար պատրաստում էր «Վազներ Ռիխարդ», «Ֆրանց

<sup>19</sup> «Մշակ», (Թիֆլիս), 1904, հունվարի 15, թիվ 1:

<sup>20</sup> «Տարազ», 1904, թիվ 7, էջ 47:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>23</sup> Կոմիտաս, Նամակներ, Երևան, 2000, էջ 48:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 49:

Լիստ» և «Հովսեփ Վերդի» հոդվածները<sup>25</sup>: Չնայած ծանրաբեռնվածությանը՝ Կոմիտասը սկսում է «Անուշ» պոեմը օպերայի վերածելու աշխատանքները: Երաժշտի այդ որոշումը գումարվում է «Մասնա ծոեր», «Քաղաքավարության վնասները» և «Վարդան» օպերաները գրելու նրա մտահղացումներին<sup>26</sup>: Սակայն «Անուշը» միանգամից դառնում է առաջնային: Կոմիտասի կարծիքով, «Անուշն» այնքան բանաստեղծական է, որ կարծես «որոշ հատվածների երաժշտությունը հենց ինքն է գրել, ուրեմն նա էլ երաժշտական հոգի ունի»<sup>27</sup>:

Թումանյանի և իշխանուհու մտերմությունը ավելի սերտ դարձավ «Հասկեր» մանկական ամսագրում համատեղ աշխատելու տարիներին:

1905–1906 թթ. Թումանյանը մեծ սիրով ու նվիրումով աշխատակցում էր «Հասկեր» մանկական ամսագրին՝ կարճ ժամանակով դառնալով ամսագրի ոգին ու հենասյունը: 1908 թ. հունվարի 22-ին ընկերոջը՝ Փ. Վարդազարյանին, նա տեղեկացնում է. «Էս տարի կապվել եմ «Հասկերի» հետ, որ ամեն ամիս բան տամ ու մոտիկ խառնվեմ գործին: Ռուստեմն ու Մարիա Մարկովնան էլ մոտեցել են «Հասկերին»<sup>28</sup>: Թումանյանը նկատի ուներ իշխանուհի Մ. Թումանյանի կողմից ամսագրի «մի ամբողջ բաժնի» ղեկավարությունը՝ «Մարիամ տատիկի տուպրակից» անվան տակ: Այդ բաժինը աշխույժ կապ էր հաստատել ամսագրի պատանի ընթերցողների հետ: Երեխաները հաճախ ցանկանում էին անձամբ ծանոթանալ «Մարիամ տատիկին», սակայն իշխանուհին միշտ խուսափում էր ու մերժում, իբրև թե շատ է պառավ, հիվանդ է և անկողնու մեջ է<sup>29</sup>:

1910 թ., երբ իշխանուհին իր հիվանդ որդու՝ Միքայելի հետ, ստիպված մեկնում է Շվեյցարիա, դադարում է «Հասկերին» աշխատակցելուց և խնդրում է Թումանյանին շարունակել այդ բաժինը «Օվաննես պապիկի» անվան տակ: Սակայն «Հորիզոնի» խմբագրությամբ զբաղված՝ Թումանյանը չէր կարող արձագանքել իշխանուհու ցանկությանը: Նրա մերժմանը Մ. Թումանյանը պատասխանում է Լեյզենից 1910 թ. սեպտեմբերի 6-ին. «Ախ, ափսո՛ս, ինչպես լավ բաներ կարելի էր անել Մարիամ տատիկի և Օհան պապիկի հետ միասին»<sup>30</sup>:

Ի դեպ, նույն առաջարկով Թումանյանին դիմել էր նաև «Հասկերի» խմբագիր Ստեփան Լիսիցյանը: «Ես գրեցի Հովհաննեսին, որ կցանկանայի այդ բաժինները շարունակվելին նույն հոգով, և եթե որևէ պատճառով իր համար անհարմար է գտնում «Մարիամ տատիկի» անունից խոսել կամ ոճը ուզենա փոխել, թող գրի

<sup>25</sup> Տե՛ս «Տարագ», 1904, թիվ 8, 19, 23:

<sup>26</sup> Ավելի մանրամասն տե՛ս՝ Ռ. Ա. Թ ա յ ա ն. Կոմիտասի ձեռագրերը. – «Սովետական արվեստ», 1969, թիվ 4, էջ 44–54:

<sup>27</sup> Խ. Գ. Բ ա ղ ի կ յ ա ն. Կոմիտասը ինչպիսին եղել է, Երևան, 2002, էջ 127:

<sup>28</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով. հ. 10, Երևան, 1999, էջ 38 (այսուհետև հատորը և էջը կնշվեն մեջբերումներին կից):

<sup>29</sup> Տարիներ անց երիտասարդ դարձած այդ փոքրիկներից մեկին իշխանուհու բարեկամներից մեկը ծանոթացնում է նրան՝ ասելով. «Ահա քեզ և «Մարիամ տատիկը», որին դու մանկությանդ օրերին այնքան փափագում էիր տեսնել: Չարմացած երիտասարդը հիասթափվում է՝ զգալով, որ իրենից իլեցին մանկության հեքիաթը, և ասում է. «Դուք քանդեցիք իմ երևակայած պատկերը... այժմ ես կորցրեցի իմ մանկության հիշողություններից մեկը» (ՄԹ, 129):

<sup>30</sup> Հովհաննես Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 5, էջ 346:

«Օհան պապի» կողմից»<sup>31</sup>: Բհարկե, եթե Թումանյանը շարունակեր իշխանուհու ղեկավարած բաժնի աշխատանքները, անշուշտ, կընտրեր «Պապից» ստորագրությունը, որովհետև դեռ 1908 թ., երբ «Հասկերում» առաջին անգամ տպագրվեց «Չարի վերջը», այն ուներ «Պապի առակներից» ենթավերնագիրը<sup>32</sup>:

«Հասկեր» ամսագրին աշխատակցելն ու «Լուսաբեր» դասագիրքը ավելի մեծացրեցին Թումանյանի համբավն ու հռչակը մանուկների շրջանում: Այդ ճանաչմանը նպաստեց նաև իշխանուհի Մ. Թումանյանը, որը նախաձեռնեց ու 1909–1912 թթ. իրականացրեց «Հովհաննես Թումանյանի մանկական գրադարանը» մատենաշարի 15 պատկերազարդ գրքույկների հրատարակությունը՝ Ռոտտերի, Գ. Երիցյանի գեղեցիկ նկարազարդումներով, այդ թվում՝ «Աղվեսը», «Շունն ու կատուն», «Անբախտ վաճառականները» և այլն: Դրանք տպագրվում էին այն օրերի համար բավական մեծ տպաքանակով, այսպես՝ «Օրտը» տպագրվել է 2400 օրինակ: Հեքիաթների հրատարակությունը սկսելուց առաջ իշխանուհին, զգուշանալով բոլոր գրքերի գրեթե ողջ տպաքանակը նվիրելու Թումանյանի սովորությունից, նախօրոք պարտավորեցնում է նրան 50 օրինակից ավելին չպահանջել: «Ես հույս ունեի,– շարունակում է իշխանուհին,– որ Թումանյանը կգսպի իրան, և ես հնարավորություն կունենամ նրա համար մի պատկառելի գումար հավաքել, բայց նա շարունակեց ըստ իր սովորության ձրի բաժանել գրքույկները, և իմ բոլոր ջանքերը ապարդյուն անցան»: 1910 թ. դեկտեմբերի 23-ին «Հորիզոնում» գետեղվում է հայտարարություն, ըստ որի շուտով լույս կտեսնեն այդ մատենաշարից Թումանյանի թիվ 12, 13, 14 գրքերը՝ «Քաջ Նազարը», «Փոքրիկ ձկնորսը», «Լեզուն կտրած ծիտիկը» (թիվ 14) Ռոտտերի նկարազարդումներով և առաջարկում են «դիմել գրավաճառներին»<sup>33</sup>:

Թումանյանի հեքիաթների ու պատմվածքների մանկական մատենաշարը մեծ հիացմունքով ու սիրով ընդունվեց ոչ միայն մանուկների կողմից: Հովհ. Տեր-Միրաքյանն իր գրախոսականում գունատիպ, պատկերազարդ գրքույկների երևան գալը խոշոր իրադարձություն և երևույթ էր համարում թե՛ հայ մանկագրության ասպարեզում, թե՛ հայ հրատարակչական և գունավոր տպագրության ոլորտում: Նա գրում է. «Այժմ մեր ձեռքի տակ եղած հայերեն պատկերագրքերը ոչ միայն բարձր են այդ արտադրություններից, այլ և կարող են մրցել ռուսական ավելի արժանավոր գրականության արտադրությունների հետ»<sup>34</sup>: Բնչպես Տեր-Միրաքյանի հոդվածում, այնպես էլ «Հորիզոնի» 1909 թ. դեկտեմբերի 29-ի համարում «Տերն ու ծառայի» մասին գրախոսականում բարձր էր գնահատվում իշխանուհի Մ. Թումանյանի նախաձեռնությունը: Անստորագիր առաջնորդողում ասվում էր. «Իշխանուհի Թումանյանը ձեռնարկել է մի շատ օգտակար գործ... ճշմարտությունը այն է, որ մանուկների մեջ սեր զարթնեցնելու համար ամենալավ ճանապարհը գրավիչ գրույցների, հեքիաթների, առասպելների պատկերազարդ գրքույկների հրատարակությունն է»: Ըստ անանուն գրախոսի՝ այդպիսի

<sup>31</sup> ԳԱԹ, Մարիամ Թումանյանի ֆոնդ, թիվ 352:

<sup>32</sup> Տե՛ս՝ «Հասկեր», 1908, թիվ 1, էջ 3-9:

<sup>33</sup> «Հորիզոն», 1910, թիվ 286:

<sup>34</sup> «Նոր դպրոց», 1909 (Թիֆլիս), թիվ 6-7, էջ 115:



հրատարակությունները ապահովում են «մայրենի մանկական գրականության զարգացումը»: Գրախոսը հենց Թումանյանի երկերի հրատարակության մեջ է տեսնում այդ զարգացման լավագույն ազդակը: Այդպիսի ազգային հոգևոր սնունդ ստացած մանուկը կունենա «բնականոն առողջ զարգացում»: «Այսպիսով, – եզրակացնում է հոդվածագիրը, – հասարակական գործը, որը ձեռնարկել է իշխանուհի Թումանյանը, առերևույթ փոքր է, բայց բերում է արդյունավետ ապագայի»:

1908–1909 թթ. Թումանյանը Մեսեխի բանտում էր: 1908 թ. դեկտեմբերին Կովկասում քաղաքական համատարած հալածանքի պայմաններում Թիֆլիսում իրականացվում էին բազմաթիվ ձերբակալություններ: Շուրջ 160 դաշնակցականներ ու անկուսակցական ազգային գործիչներ հայտնվել էին բանտերում: Դեկտեմբերի 17-ին ձերբակալվում է Ավ. Իսահակյանը, իսկ 1908 թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը՝ Թումանյանը՝ ավագ որդու՝ Մուշեղի հետ: Նա, ինչպես «Դաշնակցական գործով» մյուս ձերբակալված հայ մտավորականները մեղադրվում էին 102 հոդվածով, որը ամենախիստ պատիժն էր նախատեսում հակապետական արարքների և իշխանությունների տապալմանն ուղղված գործողություններ իրականացնելու համար: Նրա համար անհանգստանում էին նրա հարազատներն ու բարեկամները: Բոլորը անհանգստանում էին, իսկ կոնկրետ օգնության քայլեր ցուցաբերում է հատկապես իշխանուհի Մ. Թումանյանը, թերևս, այն պատճառով, որ միայն նա ուներ այդպիսի հնարավորություններ: Հենց լսում է բանաստեղծի բանտարկության լուրը, անմիջապես գնում է փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ տեսակցության, որպեսզի համոզի նրան Թումանյանի անմեղության մեջ: Իշխանուհին փոխարքայից հուսադրվում է միայն երրորդ այցելության ժամանակ, երբ ստանում է նրա խոստումը, թե Թումանյանը «շուտով ազատ կլինի» (ՄԹ, 139): Ինչպես երևում է, փոխարքան, այնուամենայնիվ, օգնել է Թումանյանին, որովհետև արդեն բանտից դուրս գալուց հետո՝ 1909 թ. հուլիսի կեսերին, բանաստեղծը տեղեկացել է այդ մասին. «Միայն թե մի բան ինձ շատ զարմացրեց, թե ինչ սրտով են վերաբերվել իմ գործին փոխարքան ու կինը և մի քանի ուրիշ բարձրադիր անձինք» (10, 77):

Մինչ Թումանյանը բանտում էր, իշխանուհին մտածում էր որևէ կերպ բանաստեղծի վիճակը մեղմելու մասին: Նա «շարունակ տանջվում» էր Թումանյանին տեսնելու և հուսադրելու ցանկությունից: Բարեգործական երեկույթներից մեկի ժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը իշխանուհուն ծանոթացնում է Մեսեխի բանտի տնօրենի (վարիչի)՝ բանտապետ Ռբմկևիչի հետ, որպեսզի Թումանյանի համար հնարավոր լիներ բանտում արտոնություններ ստանալ. «Ինձ թեև շատ զզվելի էր բանտապետի ձեռքը սեղմելու, այնուամենայնիվ, ես զսպեցի ինձ՝ միշտ Թումանյանի շահը աչքի առաջ ունենալով և համարյա ամբողջ երեկո Ռբմկևիչի հետ անցկացրեցի: Ես աշխատում էի գրավել նրա համակրությունը, և իսկապես բաժանվելիս նա խոստացավ ինձ տեսակցություն տալ բանտարկյալի հետ, որ ինձ շատ ուրախացրեց» (ՄԹ, 140):

Նշանակված օրը, կյանքում առաջին անգամ, իշխանուհին գնում է բանտ, սակայն «կասկածելի փայլ» նկատելով բանտապետի աչքերում՝ «սարսափում է»:

Նա հետաձգում է տեսակցությունը մեկ այլ անգամի և խնդրում է իրեն տուն ուղեկցել: Ռեմկնիչին դուր չի գալիս իշխանուհու այդ որոշումը, և նա «պաշտոնական սառը» ձևով հայտարարում է, որ հաջորդ անգամ իշխանուհին կարող է Թումանյանին տեսակցության գալ միայն նահանգապետի թույլտվությամբ: Վերջինս մերժում է Մ. Թումանյանի խնդրանքը:

Թումանյանի և իշխանուհու նամակագրությունը հայ գրականության ու մշակույթի պատմության, թերևս, ամենագեղեցիկ ու մնայուն էջերից են: Նրանցում պահպանվել են ոչ միայն ժամանակի ազգային-հոգևոր կյանքի նշանակալից իրադարձությունների արձագանքները, այլև մեծ քանաստեղծի կենսաբաղձ ու կենսաստեղծ բնավորության անկեղծ դրսևորումները, երկու անվանի հայերի փոխադարձ սիրո խոստովանությունները: Թումանյանի և իշխանուհու միջև ձևավորված բարեկամությունն աստիճանաբար վերաճում է սիրո:

Հասարակության մեջ զբաղեցրած իր դիրքի շնորհիվ իշխանուհին ապրում էր բարձրաշխարհիկ կյանքով, ելումուտ ուներ և անձամբ առնչվել էր Ռուսաստանի կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի, իսկ ավելի ուշ՝ նաև Նիկոլայ Երկրորդի հետ: Նա ժամանակի հասարակական-մշակութային նշանավոր գործիչներից էր, հայտնի բարերար, ապրում էր լիարժեք և իրեն երջանիկ էր զգում միայն գործի մեջ, իսկ ազատ ժամերին «հոգնում էր» և «հաճախ նույնիսկ ուշաթափվում» (ՄԹ, 6):

Թումանյանին ուղղված նամակներում իշխանուհին մշտապես պատմում էր իր սկիզբ ու վերջ չունեցող նախաձեռնությունների, բարեգործությունների մասին: 1902 թ. սեպտեմբերի 25-ին նա գրում է. «Թատրոնը պետք է պահել ժողովրդի համար... Եթե ինձ հաջողվի լավ խումբ կազմել սիրողներից, ես ինձ երջանիկ կհամարեմ»<sup>35</sup>: Մեկ այլ նամակում իշխանուհին հավաստիացնում է. «Ամառը վերջանում է, և ես չափազանց ուրախ եմ: Ձեռքերս քոր են գալիս, ինչպես ասում են՝ գործ և գործ եմ ուզում... Առանց գործի՝ կյանքը կյանք չէ»<sup>36</sup>:

Մշակութային բարեգործական գրեթե ոչ մի նախաձեռնություն Թիֆլիսի հասարակական կյանքում առանց իշխանուհու մասնակցության և նախաձեռնության տեղի չէր ունենում: Դեռևս 1901 թ. ամռանը նա կազմակերպել էր «Թատրոնական ընկերությունը», որը մտադիր էր առաջիկա աշնանից մշտական թատերական հայկական խումբ պահել Թիֆլիսում<sup>37</sup>:

Իշխանուհին է հիմնադրել նաև Հայուհյաց բարեգործական ընկերությունը և նախագահել այն (1903–1907 թթ.): Նա կազմակերպել է անվճար թեյարաններ ու ճաշարաններ, բացել է գորգագործական արհեստանոցներ, որբանոցներ, որտեղ սովորող երեխաները նրան «մայրիկ» են անվանել՝ այնպես, ինչպես Էջմիածնի որբերը Հ. Թումանյանին «հայրիկ» էին ասում:

Թումանյանը շատ բարձր էր գնահատում իշխանուհու ծավալած հասարակական գործունեությունը և ամեն կերպ խրախուսում ու քաջալերում էր նրա յուրաքանչյուր նոր նախաձեռնություն: Իսկ երբ իշխանուհին 1902 թ. նոյեմբերի

<sup>35</sup> Թումանյան, ուսումնասիրություններ և հրատարակումներ, հ. 5, էջ 288:

<sup>36</sup> ԳԱԹ, ՄԹՖ, թիվ 668:

<sup>37</sup> «Մշակ», 1901, թիվ 117:

20-ի նամակով դժգոհում է, որ իր կազմակերպած ներկայացումներին բազմաթիվ ցանկացողներ դրսում են մնում, որովհետև դահլիճները միշտ ավելի փոքր են, քան նրանց թիվն է<sup>38</sup>, բանաստեղծը հետևյալ տողերով է մխիթարում բարեկամուհուն. «Ես ուշադրությամբ հետևում եմ և ուրախանում: Թող Ձեր լացը դրա համար լինի, որ գալիս են ու հնար չկա տեղավորելու, և այդ դժգոհությունները թող Ձեզ ավելի ուրախացնեն, քան թե վշտացնեն» (9, 375):

Թումանյանի խրատասանքին էր արժանացել 1902 թ. հունվարի 20-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի ունեցած Թիֆլիսի Հայոց բարեգործական ընկերության երեկույթը, որի կառավարչուհին իշխանուհի Մարիամ Թումանյանն էր: «Օրվա չարիքներից կուպլետները» պատրաստել էր իշխանուհին՝ նախօրոք դրանք ուղարկելով Թումանյանին՝ կարծիքի<sup>39</sup>:

1902 թ. փետրվարի առաջին օրերին արդեն վաճառվում էին Մարիամ Թումանյանի նախաձեռնությամբ պատրաստված խաղալիքները՝ հետևյալ հայտարարությամբ. «ռուերեն, հայերեն կուրիկներ երեխաների համար՝ սովորելու տառեր և բառեր. ռուերենը բաղկացած է 144 տառերից, հայերենը՝ 168 տառերից առանձին արկղներում»<sup>40</sup>:

Թումանյանը հավատում էր Մարիամ Թումանյանի հասարակական գործչի տաղանդին, դժվարությունների առջև երբեք չընկճվող, երբեք չնահանջող նրա բնավորությանը: Նա համոզված էր, որ իշխանուհին չէր կարող չհաջողել. «Գիտեք, առհասարակ, որ ասում են՝ այս ենք անելու կամ այն, ես դրանից ոչինչ չեմ հասկանում, ինձ անբովանդակ բառեր են թվում, բայց երբ որ Դուք եք ասում, ես արդեն երևակայում եմ գործը, անպայման հավատում եմ, որ բան է լինելու:

Ճշմարիտ, որ անհատներն են գործ ստեղծում, կերպարանք տալիս, ձև տալիս, ընթացք տալիս հասարակական կյանքին:

Մի քանի մարդ – և կյանքը դառնում է եռուն, կենդանի, գեղեցիկ» (9, 300, ընդգծումը մերն է – Ս. Ն.):

Թումանյանը այս խոստովանում էր նաև իր մյուս մտերիմ ընկերներին ու բարեկամներին: Այդ մասին կարդում ենք նաև Ֆիլիպին գրած 1902 թ. օգոստոսի 23-ի նամակում. «Մարիա Մարկովնան երևի եկած կլինի... գրում է, որ նոր ծրագիրներ է կազմել: Տե՛ր աստված: Ես կարծում եմ այս ձևեր նոր բաներ ենք տեսնելու. նա կանի, ես հավատում եմ: Զարմանալի կին է: Ափսոս, նրան լավ չեն ճանաչում առհասարակ: Է՛հ, վերջումը կճանաչեն, միշտ վերջումը...» (9, 302, ընդգծումը մերն է – Ս. Ն.):

Թումանյանը լավ էր ճանաչում ու բարձր էր գնահատում իր «քնքույշ բարեկամուհուն», և երբ մեկ-երկու ամիս նրա որևէ նոր բարեգործական ձեռնարկի մասին լուր չէր ստանում, անհանգստացած գրում էր. «...Բնչպե՞ս էք, ի՞նչ նոր ծրագիրներ եք մտածում, արդյոք թատրոնա- գրա- բարեգործա- ... և այլն ական: Քանի ժամանակ է՝ մի նոր գործ չեք հնարում, թե՛ Ձեզ էլ ինձ նման թողել է մուգան» (9, 434): Բանաստեղծի նամակներում իշխանուհին բնորոշվում է իբրև

<sup>38</sup> Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 5, էջ 289:

<sup>39</sup> «Տարագ», 1902, թիվ 3, էջ 17:

<sup>40</sup> «Մշակ», 1902, թիվ 201:

«քնքույշ ընկեր», «գեղեցիկ հրատարակչուհի» (10, 77), «բանաստեղծության գուրգուրացող այդ քնքույշ» սիրտ (10, 78): Թե այս, թե 900-ական թթ. բանաստեղծի կյանքի յուրաքանչյուր նշանակալից իրադարձություն կապվում է Մ. Թումանյանի անվան հետ: Վերջինս միակ հայ կինն է, որը շուրջ երկու տասնամյակ եղել է Թումանյանի կողքին և վայելել է նրա ջերմ, անկեղծ սերն ու քնարական զգացումները:

Իշխանուհի Մարիամ Թումանյանը արտաքին աշխարհի համար շատ երջանիկ ու նախանձելի ճակատագրի տեր կին էր: Եվ իրոք, նա ապրում էր բարեկեցիկ, ապահով, հետաքրքիր, լիարյուն կյանքով: Նա սիրված ու հարգված էր և՛ ընտանիքում, և՛ թե հասարակական միջավայրում: Սակայն դա միայն նրա կյանքի ու ճակատագրի արտաքին փալն էր: Մինչդեռ գոյություն ուներ նաև այլ, ոչ տեսանելի, մարդկանց աչքից ամենայն խնամքով թաքցվող այլ իրականություն: Վեց երեխաների մայրը իբրև կին ամուսնական կյանքում երջանիկ չէր: Նրա ամուսինը՝ Գ. Թումանյանը, թեև երբևէ որևէ արգելք ու սահմանափակում չէր դրել կնոջ առջև, սիրել և խորապես հարգել էր նրան, սակայն լինելով կնոջից տարիքով գրեթե կրկնակի մեծ՝ իր հանդեպ նույնպիսի սեր երբեք չէր զգացել: Ամուսնու մեծ վստահությունը կնոջ հանդեպ նպաստել է իշխանուհու ազատ ու անկաշկանդ վարքի դրսևորմանը. «Ես անթիվ նամակներ էի ստանում զանազան դիմումներով, և ամուսինս երբեք չէր հետաքրքրվում իմ գրագրությամբ, և եթե ինքս չպատմեի նրան որևէ նամակի մասին, նա սովորություն չուներ հարցնելու» (ՄԹ, 196):

Եվ, անշուշտ, ամուսնու համար անընթեռնելի են մնացել Թումանյանի նամակները՝ ուղղված իշխանուհուն: Դրանցից շատերը իսկական գեղարվեստական ստեղծագործություններ են: Խոսքը վերաբերում է հատկապես Աբասթումանից գրած նամակներին: 1902 թ. աշնանը Թումանյանը իշխանուհուն գրած նամակներում ակնարկում է մարդկային կյանքում ավստասանքների հրաժեշտի և այդ ամենի բնության ներդաշնակության մասին: «Ամբողջ օրը զբոսնում եմ. թաղվում եմ անտառների խորքերում, աշնան այնքան անուշ ու տխուր լռության մեջ, լսում եմ միայն թափվող դալուկ տերևների վերջին կարճատև շունչները և թռչունների հրաժեշտի սրտաճմլիկ ծլվլոցը, որ դեղնած ճյուղերի մեջ իզուր գարուն են որոնում ու... ծլվլում, ո՞վ գիտի՝ ի՞նչ ավստասանքներ, ի՞նչ հիշողություններ, ու արևի - վերջալույսի շողերի տակ մտածում եմ, որ վերջն էլ, մահն էլ կարող է սիրուն լինել, ինչպես աշունն այս հովիտում» (9, 324, ընդգծումը մերն է - Ս. Հ.):

Թումանյանի այս տողերը իշխանուհին անգիր էր արել և բառ առ բառ հիշել էր թե՛ այն պահին, երբ միայնակ կանգնած էր բանաստեղծի աճյունի առջև, և թե՛ տարիներ հետո, երբ շարադրում էր իր հուշերը նրա մասին:

1902 թ. սեպտեմբերի 8-ին Թումանյանը Մ. Թումանյանին է ուղարկում մի չափածո քառատող.

Թափառելով Բորժում-պարկում  
Հիշում է Ձեզ և ուղարկում

*Շատ բարևներ ու սեր անկեղծ  
Ձեր բարեկամ մի բանաստեղծ:*

Սկսած 1901 թ. Թումանյանի և իշխանուհու նամակներում կարելի է հանդիպել փոխադարձ սիրո ուղղակի և անուղղակի խոստովանությունների: Նույն թվականի հուլիսի 19-ի նամակում, խոսելով առհասարակ կարոտի մասին, Թումանյանն ընդգծում է նրա հազվագյուտ հայուհի լինելը. «Երևակայում եմ, որքան խոսելու նյութ կունենաք: Որքան շատ կանանց եմ հանդիպում, հետները խոսում, ճանաչում, այնքան ավելի եմ կարոտում մեր հոգեբանական- փիլիսոփայական- բանաստեղծական գրույցները» (9, 261):

Առհասարակ Թումանյանի և իշխանուհու նամակագրության մեջ հաճախ կարելի է հանդիպել հայ կնոջ կերպարի մասին դիտարկումների: Այս հարցում նրանք համակարծիք ու համախոհ էին: Այսպես, Ուրավելից Վիճիսի Մարիամ Թումանյանին ուղղված նամակում Թումանյանը գրում է. «Մաստիկ զգալի էր ինձ համար մի կրթված կնոջ բացակայությունը» (10, 252, ընդգծումը մերն է – Ս. Հ.):

Թումանյանի նամակներում այդ շրջանում հաճախադեպ էր կարոտի թեման: 1902 թ. օգոստոսի 6-ին գրում է. «Իմ հոգին այժմ հակառակ տրամադրություն ունի՝ անհագուրդ կարոտի, պապակող ծարավի, անսփռի տառապանքի ցանկություն» (9, 292):

Թումանյանը բանաստեղծ և արվեստագետ էր ու, բնականաբար, չէր կարող չնկատել գեղեցիկ և հետաքրքիր կանանց, չհրապուրվել ու չսիրահարվել: Մակայն նա մեծ ընտանիք ուներ և սիրող ու հոգատար ամուսին և հայր էր: Նույն շրջանում՝ 1902 թ. օգոստոսի 6-ին բանաստեղծը գրում է Փ. Վարդազարյանին. «Ես քեզ անկեղծ եմ ասում, ես կյանքից էլ եմ զզվել, և եթե մի բան կա, որ ինձ կապում է՝ այդ երեխաներն են» (9, 294, ընդգծումը մերն է – Ս. Հ.): Այս տողերը գրում է սիրահարված բանաստեղծը, որն իր ուսերին զգում էր մեծ ընտանիքի ծանրագույն բեռը և միաժամանակ չէր կարողանում դիմագրավել հոգու մեջ արթնացող քնարական զգացմունքներին: «Այսպես, – գրում է Թումանյանը օգոստոսի 23-ին, – չգիտենք՝ ինչի հավատանք, ինչ սիրենք, ինչ ցանկանանք. տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեզր ալեկոծության մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում, և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները» (9, 301-302, ընդգծումը մերն է – Ս. Հ.):

Իր հերթին Թումանյանի կյանքի յուրաքանչյուր դժվարություն, ֆիզիկական կամ հոգեկան ամեն մի ցավ խորապես վշտացրել է իշխանուհուն, երբեմն նույնիսկ ավելի շատ, քան բանաստեղծին, հատկապես, երբ խոսքը վերաբերել է Թումանյանի առողջությանը: Մ. Թումանյանը գրում է. «Բայց ավելի շատ եմ ուզում Ձեզ շուտով կատարյալ առողջ տեսնել, ուստի Դուք լավ պահեցեք Ձեզ, մի՛ հոգնեք և զգո՛ւյ՛ջ եղեք մրսելուց: Մրսելը շատ վտանգավոր է Ձեզ համար»<sup>41</sup>: Առհասարակ իշխանուհին որևէ գործ կամ պատճառաբանություն ու հիմնավո-

<sup>41</sup> Հովհաննես Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 5, էջ 289:

րում չէր ընդունում բանաստեղծից, եթե այն պիտի սպառնար նրա առողջությամբ: 1909 թ. հուլիսի 24-ին նա բանաստեղծին գրում է. «Լուսաբերը» և ուրիշ գործեր կոպեկ չարժեն ի դիմաց Ձեր առողջության» (10, 496):

Տարիներ շարունակ մեծ բանաստեղծն ու մեծ հայուհին միմյանց խոստովանում էին իրենց բարեկամական զգացումներն ու ամենանվիրական ապրումները: Նա և փիլիսոփա էր, և բարոյախոս, և բանաստեղծ, և պարզապես մարդ: Իբրև բանաստեղծ, երիտասարդ հասակից ստանձնել էր սիրահարների անկեղծ զգացմունքները մերժող մարդկանց, հասարակության խիղճն արթնացնողի պարտականություն: Երկար ժամանակ, հավանաբար, Վարյա Խանդավիրյանի նկատմամբ իր հրապուրանքը հաղթահարելուց հետո, Թումանյանը զգում էր, որ իր զգացմունքները իշխանուհու նկատմամբ խաբեպատիր չեն, այլ միանգամայն իրական:

Ամուսնացած կնոջը սեր բացատրելու Թումանյանի համարձակությունը ինչ-որ տեղ բացատրվում էր նաև իր նկատմամբ իշխանուհու անթաքույց հիացմունքով ու մշտատև, շարունակական, անսահման սիրով: Իշխանուհին գիտակցաբար, թե ենթագիտակցաբար իր սևեռուն ուշադրությամբ, միայն սիրող կնոջը բնորոշ հոգատարությամբ, նաև սիրված լինելու գրեթե բացահայտ մղումով, իր չխոստովանած, սակայն միանգամայն իրական սիրով սեր էր հարուցում: Նախ Մարիամն ինքն է խնդրում բանաստեղծին իր այբումում «հատուկ իր համար» որևէ բան գրել: Վերցնելով այբումը՝ Թումանյանը մի քանի օրից վերադարձնում է այն երեք բանաստեղծություններով, որոնք իշխանուհին «շատ հավանեց»: Մակայն մի շաբաթ անց բանաստեղծը խնդրում է ետ տալ այբումը, որպեսզի նոր ոտանավորներ գրի: Եվ այդպես էլ չի վերադարձնում՝ պատճառաբանելով, որ դրանք պատռել է իշխանուհուն արված իր սիրո խոստովանության օրը:

Իսկ խոստովանությունը տեղի էր ունեցել 1908 թ. գարնանը՝ իշխանուհու՝ Թիֆլիսի Պասկևիչի փողոցում գտնվող հայրական տանը: Իշխանուհին պարբերաբար թողնում էր ամուսնու տունը՝ Բարյատինսկու փողոցի թիվ 8 հասցեում, ու բնակվում էր հոր՝ Մարկոս Դոլուխանյանի տանը, որտեղ և պարբերաբար լինում էր Թումանյանը:

Թումանյանը երբեմն «մտերմական բոպեններում» Մարիամ Մարկովնան կրճատելով, իշխանուհուն անվանում էր Մարմար:

Այդ օրը իր բոլոր մանրամասներով անջնջելի դրոշմվում և ապրում է իշխանուհու հիշողության մեջ նրա կյանքի ողջ ընթացքում, և նա մտապահում է այդ սիրո խոստովանության յուրաքանչյուր բառը, հայացքը, շարժումը:

Իր հուշերում իշխանուհին գրում է, որ Թումանյանը խոստովանել է. «Որքան գեղեցիկ բանաստեղծություններ եմ գրել ձեզ համար ու քամուն եմ տվել» (ՄԹ, 133, ընդգծումը մերն է – Ս. Հ.): Թե՛ իշխանուհու այբումում գրած բանաստեղծությունները պատռելը, թե՛ նրան նվիրած ոտանավորներն Աբասթումանում «քամուն տալը» վկայում են, որ Թումանյանի պայքարը սեփական զգացմունքների դեմ երկարատև ու տառապալից է եղել: Այդ մասին նա խոստովանել է միայն Ֆիլիպին, որն էլ խորհուրդ է տվել լռել: Մակայն ամեն անգամ իրեն սիրահարված որևէ կնոջ հանդիպելիս, Թումանյանն ավելի խորն է զգացել իշխանուհու

բացատրությունը, նրա կանացի ու մարդկային արժանիքները, հոգու հարստությունը և «սիրտը ոչ ոքի» չի ընդունել:

Իշխանուհին, թեև շփոթված, սակայն բարձրաձայն դժգոհում է բանաստեղծի՝ իր մասին գրած բանաստեղծությունները ոչնչացնելու արարքի դեմ, որովհետև նրա նվիրական երազներից է եղել, որ Թումանյանը իրեն բանաստեղծություններ նվիրի: Նույնիսկ բանաստեղծի մահից հետո նա չէր հաշտվում իրեն նվիրված այդ ստեղծագործությունների կորստի հետ և քանիցս խնդրել է Թումանյանի արխիվով զբաղվող դասերը՝ Նվարդին, գտնել դրանք և վերադարձնել իրեն:

Անկախ ամեն ինչից իշխանուհին մշտապես զգացել է բանաստեղծի սիրո կարիքը: Մարիամ Թումանյանը ուղղակի չի խոստովանել, որ ինքն էլ նույն ուժգնությամբ, թերևս, ավելի մեծ սիրով, փոխադարձել է բանաստեղծին, սակայն միաժամանակ ամենին չի թաքցրել, որ ընտանեկան կյանքում երբեք երջանիկ չի եղել. «Ամուսնացած եմ, բայց չեմ վայելում ամուսնության քաղցրությունը: Գաղափարական, ազնիվ ու խելոք ամուսին ունեմ, բայց իմ մեջ չկա դեպի նա հարկավոր ջերմությունը, թեև շատ եմ գնահատում նրան և խորապես հարգում եմ: Երեխաներ ունեմ, որոնց շատ եմ սիրում, բայց նրանք չեն լցնում իմ ամբողջ էությունը... Մի մտերիմ ու քնքույշ բարեկամ ունեմ, որի երջանկության համար պատրաստ էի ամեն տեսակ զոհաբերություն անել...» (ՄԹ, 136):

Սակայն երբ գալիս է վճռական պահը, իշխանուհին դժվարանում է միանշանակ պատասխան տալ: Այժմ նրա հերթն էր ապրելու վարանքի տանջալի զգացումը և տատանվելու իր ապրումների ու հասարակության ստեղծած պատնեշները և պայմանականությունները, խոր անդունդը հաղթահարելու միջև. «Ես շարունակում էի լռել, մնացել էի շվարած, թե ինչ պատասխանեմ...»

Գլուխս քաշ տվեցի ու ցածր ձայնով արտասանեցի՝ «Չգիտեմ» և, իրոք, ես չգիտեի, թե որն է լավը. միայն մի բան էի զգում, որ կորցրել էի կյանքի գեղեցկություններից մեկը: Իմ աչքերը լցվեցին արտասուքով, ու իմ գլուխը ավելի ցած իջավ» (ՄԹ, 134):

Գրականության ականավոր տեսաբան Դենի Դը Ռուժմոնը գրում է. «Երջանկությունը Էվրիդիկեն է. նրան կորցնում ենք այն պահին, երբ ցանկանում ենք որսալ: Ամեն մի երջանկություն, որն ուզում են զգալ, անմիջապես վերածվում է անտանելի մի բացակայության»<sup>42</sup>:

Երկու սիրող սրտեր կորցրեցին երջանկության պահը հենց այն ակնթարթին, երբ փորձեցին որսալ, և նրանց սերը վերածվեց «անտանելի մի բացակայության»:

Թումանյանի սիրո խոստովանությունը և Մարիամի «չգիտեմը» մի երկչու ըմբոստացում, պայքարի փորձ էր ժամանակի պայմանականությունների, սերը կաշկանդող ու սպանող բարոյական օրենքների դեմ: Մի պահ իշխանուհին փորձել է ընդունել ճակատագրի և հասարակական կարծիքի ձևավորված, կարծրացած մարտահրավերը և վերացնել ստեղծված հանգույցը՝ հոգու խոր-

<sup>42</sup> Դ է ն ի դ ը Ռ ու ժ մ ո ն. Սերը և Արևմուտքը, Երևան, 2006, էջ 287:

քում և լեզվի ծայրին պտտվող դրական պատասխանով՝ «Միրում եմ» (ՄԹ, 134): Մակայն հաղթում է այլասիրական մեկ այլ զգացում՝ անձնական երջանկության գոհաբերումը առաքինությանը և ընտանեկան պարտականություններին: «...Մենք չէինք կարող միանալ, – բացատրում է իշխանուհի Մարիամ Թումանյանը, – որովհետև երկու ընտանիք պիտի քանդվեր, իսկ ուրիշի դժբախտության վրա հիմնված բախտավորությունը երբեք ուրախություն չի տալիս մարդուն» (ՄԹ, 136):

Նույն կերպ էր զգում ու խորհում Թումանյանը, և նա լռելյայն հեռանում է ու երկու-երեք ամիս բացարձակ զգալ չի տալիս իր գոյությունը: Նրանք երկուսն էլ հայտնվել էին ծայրահեղ հակասական մի վիճակում: Նրանք սիրում էին միմյանց աշխարհից վերացած, անպատմելի մի «անհայտի մեջ», որը անհամատեղելի էր իրական աշխարհի հետ: Միրուց հրաժարվելու փաստը չէր կարող չուղեկցվել անձնական դրամայով: Եվ այդ դրաման տևում է ամիսներ: Մակայն երկուսի կողմից էլ երջանկության պահի կորուստը չի ընկալվում որպես աղքատացում, այլ ընդհակառակը: Կորցրածի ցավը, իհարկե, տառապանք է պատճառում, սակայն բաժանումից ձեռք բերած հոգու խաղաղությունը հարստացնում է: Պլատոնականության ակունքները նույնքան հավաստի են, որքան հակառակ ուսմունքներին, որքան հեթանոսությանը: Այդ ակունքներից մեկը բանաստեղծի հոգու խոյանքն էր դեպի «անհայտը», այսինքն՝ իդեալը, դեպի Լույսը, որն այնքան բնորոշ էր Թումանյանին: Այդ երկու-երեք ամիսների ընթացքում կարոտի դերը գլխավայր շրջվում է:

Թումանյանի էությանը բնորոշ էր կարոտի հենց այդպիսի որակը, կարոտ, որը վեհացնում էր մահկանացու մարդուն, բարձրացնում վեր, կարոտ, որից ծնվում էր բանաստեղծական հայտնությունը: Հենց Մ. Թումանյանին գրած նամակներից մեկում է այդպիսի կարոտից խոսել բանաստեղծը դեռ շատ ավելի վաղ՝ 1901 թ. հուլիսի 19-ին. «Գիտեք, 13 տարի է, ինչ ամուսնացել եմ, ես ազատ լինելու հաճույքը դեռ չեմ զգացած... և միայն կարոտ է, որ զգում եմ... իսկ կարոտը ինձ համար ամենաթանկագին զգացումն է: Առհասարակ հագուրդը, կուշտ լինելը, ավելի ճիշտ՝ հոփանալը, իջեցնում է մարդուն ներքև: Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան: Իդեալներն ի նչ են որ – հոգու կարոտներ: Եվ հենց սրա համար է լավ մենակությունը. մենակության մեջ ամենավսեմ հաճույքներ կան, և դրանք այն թույլներն են, երբ մարդու հոգին լա՛յն, խաղա՛ղ, անվրդդ Վ՛ծվում է, և սիրտը քաղցր-քաղցր ճմլում՝ երբեմն որոշ, երբեմն անորոշ կարոտներով: Եվ այդ թույլների մեջն է, որ հայտնագործություններ են անում մարդիկ, ստեղծագործում են, իհարկե, ևս առավել՝ բանաստեղծ մարդիկ» (9, 260):

Այս շրջանում Թումանյանի կյանքում ավստոսանքի տրամադրությունը իշխող էր, և այդ մասին նա խոստովանում է նաև իր նամակների այլ հասցեատերերին: Մտերիմ բարեկամներից մեկի՝ Հեղինե Մելիք-Հայկազյանին<sup>43</sup> ուղղված 1909 թ.

<sup>43</sup> Հեղինե Մելիք-Հայկազյանը զինվորական Թաֆֆու հայտնի մեկենաս Ալեքսանդր Մելիք Հայկազյանի (1888–1938) դուստրն է: Նա եղել է Թ-ի մտերիմ բարեկամուհիներից. մանկական պատմվածքների և ճամփորդական տպավորությունների մասին գրքերի հեղինակ է: Թ-ը հաճախ է հյուրընկալվել Մելիք-Հայկազյանների՝ Աբասումյանի ամառանոցում: Հեղինեի մայրը՝



դեկտեմբերի 21-ի նամակում գրում է. «Եվ ես էլ վաղուց լուրջ ավստում եմ ինձ: Բայց ի՞նչ անենք. էս է ու էսպես մեր աշխարհքը, մեր կյանքը, մեր մթնոլորտը... Եվ ես չեմ զարմանում, բայց ցավում եմ» (10, 85, ընդգծումը մերն է – Ս. Հ.):

Թեև սիրո խոստովանությունից անցել էր երկու տարի, և սերը «մեղմացել էր», սակայն Թումանյանի հիացմունքը իշխանուհու նկատմամբ ամեննին չէր նվազել: 1910 թ. օգոստոսի 10-ին Թումանյանը Աբասթումանից նրան գրում է. «Ավելի ու ավելի շատ հայ տիկիներն են ծանոթանալով՝ ավելի ու ավելի էլ գնահատում եմ Ձեզ: Ի՞նչ խեղճ արարածներ են, տե՛ր աստված, ո՛չ մի հետաքրքրություն, ո՛չ մի կենդանություն, ո՛չ մի շարժում, ո՛չ մի գույն, բովանդակություն: Չափազանց շատ են ձանձրալի, նույնիսկ խղճալի» (10, 103):

Իշխանուհու համար այնքան հաճելի էր բանաստեղծի այդ համեմատությունը, որ նա անմիջապես համաձայնում է, մանավանդ որ ողջ կյանքում աշխատել է հեռու մնալ կանանց միջավայրից. «Տիկիների մասին ինչ-որ նկատել էք, ճիշտ է, և դա ինձ մեծ ցավ է պատճառում: Երբեմն ուղղակի ամաչում եմ տղամարդկանց առաջ, լսելով, թե ինչ կարծիք ունեն մեր մասին»<sup>44</sup>:

Իշխանուհին միշտ հորդորել էր բանաստեղծին ավելի անկեղծ և ավելի համարձակ լինել իր հետ: Դեռ 1909 թ. հունիսի 20-ին նա գրում է. «Ձեր նամակները բացի ինձանից ոչ ոք չի կարդալ, այնպես որ կարող եք շատ անկեղծ գրել ինձ»<sup>45</sup>:

Քսանհինգ տարվա անկեղծ սիրո ու բարեկամության ընթացքում Թումանյանը երբեք չի նեղացրել Մարիամին: Այդ մասին վկայում է ինքը իշխանուհին՝ ասելով, որ Թումանյանից երբեք չի լսել «ոչ մի կոպիտ խոսք, երբ տխուր էի՝ նա համակերպվում էր ինձ, մոտենում էր հարցերին այնպիսի նրբազգացությամբ, որ կատարյալ ներդաշնակություն էր ստեղծվում մեր մեջ» (ՄԹ, 142):

Ինչևէ. նկատենք, սակայն, որ կյանքի վերջին տարիներին Թումանյանի և իշխանուհի Մարիամի փոխհարաբերությունների միջև որոշակի տարածություն ու հեռավորություն էր առաջացել: Ինքը՝ իշխանուհին, այդ սատոնության երկու պատճառ է մատնանշում՝ քաղաքական իրադրությունը և բանաստեղծի՝ արդեն հռչակված լինելն ու նյութական ապահովվածությունը: Մեր կարծիքով, առաջին հանգամանքը, իրոք, համապատասխանում է իրականությանը: Եղեռնին հաջորդած տարիներին Թումանյանի կյանքը վերածվել էր դժոխքի, և նա դադարել էր իր կամ իր հարազատների, մտերիմների համար ապրելուց: Նրա ուսերին ծանրացել էր պետականություն չունեցող հայրենիքի, անհամար գաղթականների ու որբերի, միլյանց հաջորդող ազգամիջյան բախումների, սահմանների, կորցրած տարածքների և հազար ու մի այլ խնդիրներ: Բանաստեղծը դարձել էր ժողովրդի ճակատագրի բոլոր հարվածների և ողբերգության կրողը: Անձնական, անհատական ապրումները հետին պլան էին մղվել. դրանք այլևս տեղ չունեին բանաստեղծի բյուր ցավերից բզկտված ու տառապած հոգում:

Վարվառա Մելիք-Հայկազյանը, որը Թ-ի ստեղծագործությունների ջերմ երկրպագուներից էր, բանաստեղծին հիշատակել էր իր կտակում:

<sup>44</sup> Հովհաննես Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հ. 5, էջ 347:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 331:

Սակայն ինչ վերաբերում է հռչակված լինելուն և նյութական ապահովվածությանը, ապա այստեղ իշխանուհու բացատրության հետ չենք կարող համաձայնել: Այդ պատճառաբանությունները մեզ հիմնավոր չեն թվում, քանի որ Թումանյանը հռչակավոր էր նաև 1908 թ., երբ սեր էր խոստովանում իշխանուհուն: Ինչ վերաբերում է նյութական ապահովվածությանը, ապա Թումանյանը ինչպես 1890-ական թվականներին 60 պարտատեր ուներ, այնպես էլ կյանքի վերջում. նրա մահից հետո կնոջը՝ Օլգային, ներկայացվում է 61 անձից կազմված պարտատերերի ցանկ<sup>46</sup>:

Առհասարակ, Թումանյանի կյանքի ու ապրելակերպի խորհուրդը ոչ միշտ էր հասկանալի իշխանուհուն: Նա չէր ընդունում Թումանյանի շոայլ ապրելու ձգտումը և անխտիր ամենքին իր հարկի տակ ընդունելու, անվերջ հյուրասիրելու իրողությունը:

...Թումանյանի և իշխանուհի Մարիամի հարաբերությունները շատ տխուր ավարտ ունեցան: Վերը նշվեց, որ Թումանյանն իր առօրյայով շատ էր հեռացել իր մտերիմներից, դա տխրեցրել ու մեծ վիշտ էր պատճառել իշխանուհուն: Եվ էթե Թումանյանի համար, կարելի է ասել, սերը մոխրացել, մարել էր, ապա նույնը չի կարելի ասել իշխանուհու համար: Մարիամի մեջ խոսում էր նաև վիրավորված կանացի արժանապատվությունը, որն էլ ավելի խորացավ 1921 թ. գարնանը, երբ Դիլիջանում բանաստեղծին խնդրեց օգնել իրեն Թիֆլիս հասնել նույն կառքով ու գնացքով, որ Թումանյանին էին տրամադրել խորհրդային իշխանությունները: Բանաստեղծը, սակայն, չկարողացավ նրա խնդրանքը կատարել:

Թումանյանը գալիս էր Երևանից դատեր՝ Աշխենի հետ, ուր գնացել էր Հայաստանի դաշնակցական իշխանություններին բոլշևիկների հետ հաշտեցնելու, Փետրվարյան ապստամբությունը, քաղաքացիական եղբայրասպան կոռիվները դադարեցնելու նպատակով: Միմոն Վրացյանը Երևանում Թումանյանին ծանոթացրել էր Կասյան-Ավիս-Դովլաթյան ստորագրությամբ մի հեռագրի, որի խիստ, կոպիտ և վիրավորական արտահայտությունները բանաստեղծին բնորոշում էին որպես «մի խաբեբա», որը Թիֆլիսում բոլշևիկներին խաբելով, եկել էր Երևան ու անցել Դաշնակցության կողմը: Կասկածի տակ էր առնվում Թումանյանի ուղղամտությունն ու սկզբունքայնությունը: Նա այդ ժամանակ տառապում էր այն մտքից, որ անգոր եղավ որևէ կերպ փոխել դեպքերի ընթացքը: Տանջվում էր, որովհետև իր աչքի առջև սիրելի ընկերները՝ «վերնականները»՝ Լևոն Շանթն ու Նիկոլ Աղբալյանը, ինչպես նաև որդին՝ Համիկը, Հովհ. Քաջազնունու հետ նույն կառքով, իսկ այնուհետև ոտքով փախուստի ճամփա էին բռնել Պարսկաստանի լեռնանցքներով, ու դեռևս լուր չունեին նրանց մասին: Դեռ չգիտեր, հոգում անորոշություն էր, և նրա ուսերին ծանրացել էր փախստական ընկերների ընտանիքների մասին հոգ տանելու պատասխանատվությունը, որ կամովին ստանձնել էր նա: Այդ մասին իր հուշերում վկայում է Ս. Վրացյանը.

<sup>46</sup> Այդ մասին մեզ հաղորդել է բանաստեղծի թոռնուհին՝ Իրմա Մաֆրազբեկյան- Թումանյանը, հենվելով ընտանեկան արխիվի նյութերի վրա:

«Նա աշխատեց ամեն կերպ թեթևացնել հեռացած գործիչների ու մտավորականների ընտանիքների դրությունը:

Անձնապես ես այդ տեսակետից առանձին երախտիք ունիմ նրա այն ազնիվ, կարելի է ասել, հայրական վերաբերումի համար, որ նա ցույց էր տվել դեպի իմ ընտանիքը: Եվ այժմ տարագրության մեջ գտնվողներից շատերը ջերմ երախտագիտությամբ են խոսում նրա այդ օրերի մարդկային գործերի մասին»<sup>47</sup>:

... Եվ, ահա, Թումանյանի գործունեությունից գրեթե դժգոհ բոլշևիկները, այնուամենայնիվ, նրա համար գնացքով շտապ Թիֆլիս հասնելու հնարավորություն էին ստեղծել: Դիլիջանում տեսնելով իշխանուհուն՝ նա իջնում է կառքից և ողջունում, սակայն իր հետ նրան ու նրա որդուն Թիֆլիս հասցնելու խնդրանքին պատասխանում է. «Ժամանակ չգտա Ձեզ տեսնելու... Հիմա էլ վրագում եմ Ղարաքիլիսա հասնելու, մի ժամից գնացքը պիտի շարժվի, ինձ են սպասում... Մի րոպե անգամ չեմ կարող կորցնել, առանց այն էլ ես ուշացել եմ» (ՄԹ, 144):

Ո՞վ գիտի, մերժման իրական պատճառը իրոք շտապելն է եղել, թե այն, որ բանաստեղծի համար հատուկ պայմաններ էին ստեղծել Թիֆլիս հասնելու ու, հնարավոր է նաև, որ այլ անձանց, մանավանդ իշխանուհուն, թույլ չտային գնացք բարձրանալ, սակայն չենք կասկածում, որ մերժման չբարձրաձայնված պատճառը պարզապես չէր կարող հիմնավորված չլինել:

Ամիսներ հետո իշխանուհին հանդիպում է Թումանյանին Թիֆլիսի փողոցներից մեկում: Բանաստեղծը ինքն է մոտենում Մարիամին իր սովորական բաց ժպիտով և մեկնում է ձեռքը: «Ես սպասում էի, որ նա մի բան կասի այն դեպքի մասին, բացատրություն կտա, ներողություն կխնդրի», – գրում է իշխանուհին (ՄԹ, 149): Սակայն այդպես չի լինում, և գրույցը ծավալվում է բոլորովին այլ հարցերի շուրջ: Այն, որ Թումանյանը ներողություն չի խնդրում, նույնպես վկայում է նրա անմեղությունը:

1922 թ. աշնանը, երբ Թումանյանը ծանր հիվանդ էր, իշխանուհին, այնուամենայնիվ, այցելում է բանաստեղծին: Նա փորձում է ինքն իրեն դարձյալ չխոստովանել, որ Թումանյանն է եղել իր կյանքի ամենամեծ սերը. «Այն մի ժամը, որ ես անց կացրի Թումանյանի անկողնու մոտ, ինձ սոսկալի տանջանքներ պատճառեց... Շատ թանկ կտայի՝ վերադարձնելու համար իմ նախկին զգացմունքները, բայց ոչինչ չէի կարող անել ու ծանր սրտով հեռացա նրանից» (ՄԹ, 150):

Իշխանուհու՝ Թումանյանի կողմից մերժված լինելը ավելի էր խորացրել իր կարոտախտը անցած երջանիկ ու երիտասարդ օրերի նկատմամբ: «Երբ Թումանյանի մահվան բոթը ինձ հասավ, ես մեծ կսկիծ զգացի և շատ արտասուք թափեցի: Ես ողբում էի այն առաջվա իմ մտերիմ բարեկամի մահը, հիշում էի այն քաղցր ժամերը, որ մենք անց էինք կացնում գրականության մասին խոսելով» (ՄԹ, 150):

Բանաստեղծի հոգեհանգստից հետո՝ 1923 թ. ապրիլի 10-ին, իշխանուհին հրաժեշտ է տալիս բանաստեղծին Հայարտանը, սակայն միայնակ՝ սպասելով բոլորի դուրս գալուն: Միտքը ալեկոծվում էր և արտասուքը՝ խեղդում: Նա ան-

<sup>47</sup> «Հայրենիք» (Բոստոն), 1923, թիվ 10, էջ 76:

գիր հիշում էր Թումանյանի նամակի այն տողերը, թե «մահն էլ կարող է սիրուն լինել», ինչպես աշունը Աբասթումանի հովտում: Եվ նա ուզում էր աղաղակել. «Մահը սիրուն լինել չի՝ կարող» (ՄԹ, 151): «...Այդ բույսերն էս ավելի խորը զգացի, թե ինչ եմ կորցրել» (ՄԹ, 151):

Ողջ կյանքում մշակութային ցանկացած արարողության ժամանակ Մ. Թումանյանը եղել էր կամ կազմակերպիչ, կամ տիրուհի, գլխավոր դեմք, համատարած ուշադրության կենտրոնում: Եվ նա որոշում է չգնալ բանաստեղծի թաղմանը «իբրև լոկ հանդիսատես»: Մակայն նախախնամությունն այլ որոշում էր կայացրել: Ապրիլի 15-ին թաղման թափորը չպետք է անցներ իշխանուհու տան կողքով, սակայն հորդառատ անձրևի պատճառով ճանապարհը փոխվում է «Հանկարծ ինչ-որ ձայներ լսվեցին փողոցից, – գրում է Մ. Թումանյանը, – միաստաբար մոտեցա պատուհանին: Ես չէի ենթադրում, որ թափորը կանցներ մեր փողոցով. դա ծրագրված չէր... Այնպիսի մի խայթոց զգացի էս սրտիս մեջ այդ բույսերին: Ինձ թվաց, որ Թումանյանը հանդիմանում է ինձ, թե ինչու չեկա նրա թաղմանը, նրան վերջին հրաժեշտը տալու: Այնքան ճնշեց ինձ այդ միտքը, որ երկար ժամանակ էս չէի կարողանում ազատվել այդ ծանր զգացմունքից» (ՄԹ, 151):

Մարիամ Թումանյանը քսանչորս տարի ապրեց Թումանյանից հետո և մինչև իր կյանքի վերջին օրերը դառնությամբ ու ավստասանքով մտածում էր, թե «ինչո՞ւ և ինչո՞ւ այդպես վերջացավ» իրենց մեծ բարեկամությունը: Այո՛, նրանց մեծ սիրո պատմությունն ունեցավ դրամատիկ վախճան, որովհետև բանաստեղծի անձնական հույզերի մեջ կնոջ նկատմամբ սերը պարտվում, ետ էր նահանջում մարդու և աշխարհի հանդեպ ծանր, ողբերգական խոհերի առջև:

Իշխանուհի Մարիամ Թումանյանի և Թումանյանի մեծ բարեկամությունն ու սերը մշտապես ուղեկցվեց բնության ձայնի և պարտքի առաքինի վարքի պայքարով: Հնարավոր է նաև, որ իշխանուհու նկատմամբ բանաստեղծի զգացմունքները ոչ այնքան սեր էին, որքան սիրելիու ցանկություն, իդեալի մղում, անհիմնալի գեղեցիկը ճաշակելու տենչանք:

ОВАНЕС ТУМАНЯН И КНЯГИНЯ МАРИАМ ТУМАНЯН

СУСАННА ОВАНЕСЯН

Р е з ю м е

Среди меценатов-покровителей и преданных друзей Туманяна особое место занимает княгиня Мариам Туманян. Забота княгини о поэте не является обычной филантропической опекой благотворителя и мецената о деятеле культуры, обусловленная пониманием масштаба его дарования. Она беспокоилась о Туманяне так, как можно беспокоиться только о самом родном человеке. М. Тума-

нян всегда оказывалась рядом с поэтом в самые трудные периоды, в самые отчаянные минуты его жизни и неизменно оказывала ему поддержку, протягивала ему руку помощи. Забота и опека княгини о Туманяне всегда носила конкретный и действенный характер. Она занималась вопросами издания книг поэта, его трудоустройства, оплачивала его лечение в санатории Абастумана, расплачивалась с его долгами, оказывала материальную помощь большой семье Туманяна, устраивала для него выгодные договоры с издателями. Княгиня, по ее собственному признанию, принимала близко к сердцу все, что происходило с Туманяном. Их отношения далеко не всегда были безоблачными, они полны драматизма, в них находилось место и для недоразумений, и для обид, и для ревности. Есть все основания утверждать, что их отношения были больше, чем обычная дружба, что их связывала взаимная любовь. И все же до признания со стороны княгини дело так и не дошло, поскольку и она, и Туманян имели семьи и не могли переступить через чувство долга, которое для обоих было превыше всего.

## HOVHANNES TOUMANYAN AND PRINCESS MARIAM TOUMANYAN

*SUSANNA HOVHANNISSYAN*

### S u m m a r y

Among patrons of art and devoted friends a special role in Toumanyán's life played princess Mariam Toumanyán. The princess' care of the poet was not just usual philanthropic protection of a patron and supporter of art towards an art worker, due to realizing the scale of his talent. She concerned about Toumanyán as it was possible to worry about the dearest person. M. Toumanyán was always ready to help her old mate down on his luck, to support him during the most desperate minutes of his life always giving him a helping hand. Princess' care and protection always carried concrete and effective character. She dealt with the edition of the poet's books, his employment issues, paid for his treatment in Abastuman sanatorium, paid off his debts, rendered financial aid to his big family, and arranged favorable contracts with publishers. Due to her own confession the princess, took to heart everything that had anything to do with Toumanyán. Their relations were not always cloudless, they were full of tensity, and there was always place both for misunderstanding, insults and jealousy. There are all bases to assert, that their relations were more than a usual friendship, that they were tied together by mutual love. And still they never admitted the fact, as long as love towards their families and the duty came first for both of them.